

Ես էլենն եմ, հետաքրքրատեր մի աղջիկ, ով դեռ մանկուց ունեցել է բազմապիսի երազանքներ, որոնցից մեկն էր՝ կյանքի գոնե մեկ օրը անցկացնել Հնդկաստանում: Իմ երազանքը իրականացնելու համար ես նախապես ծանոթացա Հնդկաստանի աշխարհագրական և քաղաքական դիրքին, պատմությանը և մշակույթին:

Եվ մի օր հետաքրքրությունից դրդված՝ ես որոշեցի գրի առնել այն ամենը, ինչը որ կանեմ Հնդկաստան մեկնելուն պես: Իմ ճանապարհորդությունը, ցավոք, շատ կարճ է տևելու՝ ընդամենը 1օր: Իմ օրը շատ պայծառ ու արևոտ սկսվեց: Սկզբում ես գնացի Դելի՝ Հնդկաստանի մայրաքաղաք, քանի որ շատ եմ կարդացել մայրաքաղաքի ճարտարապետական հուշարձանների, առեղծվածային ավանդույթների, հյուրընկալ ընտանիքների և համեղ ճաշատեսակների մասին:

Տեղավորվելով հյուրանոցում՝ ես համտեսեցի հնդիկ ժողովրդի կողմից շատ սիրված ապուր և պատրաստվեցի այցելել երկրի տեսարժան վայրեր՝ հիանալու Հնդկաստանի աննկարագրելի գեղեցկությամբ: Հնդկաստանը կոչվում է ամենավառ գույների և ամենավառ համեմունքների երկիր: Դեռ վաղ տարիքում ծանոթանալով Հնդկաստանի պատմությանը՝ ես օրեցօր նոր բացահայտումներ էի կատարում Հնդկաստանի մասին:

Իսկ գիտե՞ք, որ Հնդկաստանի տարածքում կա մի հետաքրքիր ճարտարապետական հուշարձան՝ սպիտակ մարմարե պալատ, որը դամբարան-մզկիթ է: Շենքի քառակուսի ճակատը պարունակում է կիսաշրջանաձև խորշեր: Դրա պատճառով կառուցվածքը, որպես ամբողջություն, բավականին կոկիկ տեսք ունի՝ չնայած իր ողջ զանգվածայնությանը: Ամենազարմանալին այն է, որ պալատը կարողանում է գույնը փոխել: Անձրևոտ եղանակին թվում է կիսաթափանցիկ, առավոտյան՝ վարդագույն, իսկ երեկոյան՝ ոսկեգույն: Ներսում պատերը զարդարված են ներկված սալիկներով, ամենուր կիսաթանկարժեք և թանկարժեք քարեր են:

Արդեն երեկո էր, ես ուղևորվեցի նորից Դելի: Երկար շրջելով քաղաքում՝ հասկացա, որ Դելին երեկոյան ավելի գեղեցիկ է բազմազան լույսերի ներքո: Այստեղ ես այցելեցի նաև աշխարհի ամենաբարձր մինարեթը՝ Քաթուբ Մինարը, Մոնղոլիայի դամբարանը՝ Համայունի դամբարանը, բազմաթիվ զարմանալի տաճարներ, ինչպես նաև թանգարաններ՝ Ազգային թանգարան, Գանդի Սմիթի թանգարան, Ինդիրա Գանդիի թանգարան, արհեստների թանգարան: Այսպես թե այնպես, բայց երկրով մեկ ճանապարհորդությունների մեծ մասը սկսվում է այստեղից, ուստի օգտակար և նույնիսկ անհրաժեշտ է իմանալ մայրաքաղաքի հարստությունների ու գեղեցկությունների մասին:

Եվ այսպես, ավարտվում է իմ 24 ժամը, և ես նորից պետք է վերադառնամ հայրենիք: Վերադառնալուն պես ես պատմեցի այն ամենը, ինչ որ տեղի է ունեցել ինձ հետ, թե ուր եմ գնացել ու ինչ եմ տեսել: Իմ ունեցած տպավորություններով ու կարիքներով կկիսվեմ ընկերներին ու հարազատներին հետ:

Եվ չնայած իմ տպավորություններին ու կարծիքներին՝ ես միշտ հետևում եմ մեր հայ մեծերի՝ այսպես ասած կարգախոսին՝ <<Այս կյանքում որ երկրում էլ լինես, որ քաղաքում, որ վայրում էլ լինես, քեզ կզգաս այնքան օտար, որքան հարազատ քո իսկ հայրենիքում>>:

Ավագյան Էլեն

Սևանի N 4 հիմնական դպրոցի

8-րդ ա դասարանի աշակերտուհի